տակարանից տեղեկանում ենք, որ Թովման սրբագրել է «զգիրս հասարակաց աղօթից և յիններորդ (sic) մասն բաժանեցի»։ Ցիրաւի ամբողջ ժամակարգութիւնը, բացի պատարագից, ինն մասի է բաժանել։ Դաւիթ Բաղիշեցու խօսքերից, որ նոյնպէս յիշում է Աղօթամատոյցը սրբագրելու մասին*, դժուար է պարզ հասկանալ, երբ է սրբագրել, Երևանի՞ց (1410 թ.), թէ էջմիածնից (1442/4) Մեծոփ վերադառնալուց յետոյ։ Դաւիթ Բաղիշեցին, հաւանօրէն, ուրիշ աղբիւր չէ ունեցել ձեռքի տակ այս խնդրի համար, բացի Կիրակոս Բանասէրից։ Մենք հաւանական ենք համարում առաջինը։ Թովման գրել է նաև Գրիգոր Խլաթեցու վկայաբանութիւնը, երկու Կարապետների խնդրանօք, որոնցից մէկն անշուշտ Խառաբաստայ վանահայրն է, իսկ միւսն անյայտ։ Այս վկայաբանութիւնը տարբեր է նորա տուած տեղեկութիւններից Լանկթամուրի պատմութեան մէջ**։

Թովմայի գրական աշխատութիւնների մէջ պէտք է յիշել և նորա «Խրատք յաղագս պաշտամանց եկեղեցեաց Հայաստանեայց», որ արդէն անցել է տպագրուած Ժամագրքի և Տօնացուցի մէջ։ Սակայն Կիրակոս Բանասէրը Թովմայի ժամակարգութեան մէջ արած բարեփոխութիւնների մասին աւելի տեղեկութիւն է տալիս, քան այդ «Խրատք»-ը, ինչպէս Աւետեաց տօնի և Սուրբ Աստուածի մասին։ Թէ այս և թէ միւս բարեփոխութիւններով Թովման նորամուծութիւններ չէ արել, այլ առել է նախնեաց կարգաւորութիւններից. «Զի եւ զատոյգն և զճշմարիտն ի բերանոյ

Թեւայս Սրբագրեցի զգիրս հասարակաց աղօթից եւ յիններորդ (sic) մասն բաժանեցի եւ ետու ի ձեռս մանկանց եկեղեցւոյ. վ՟ս որոյ յերեսս անկեալ, աղաչեմ պաղատանօք ք՟աւկիր եղբարցդ, որ ուրինակէք կամ ուսանիցիք զնկարագիր բանիս. այլ մի այլայլէք աղաչեմ եւ զսակաւ յիշատակարանս գրեսջիք. զի յամ՟ւնց ճանաչեալ լինի այս օրինակս, զի եւ դուք գրեսջիք ի գիրս կենաց եւ զմեզ անմոռաց յիշմամբ յիշեսջիք յաղօթս ձեր։ Զի եւ ինքն ք՟ս ՟ածն մեր ձեր մեղացն Թողու՟թի շնորհեսցէ եւ ի չարեաց ազատեսցէ եւ ի գ՟րծս բարիս առաջ՟րդեսցէ եւ ՟րի փ՟ռք յ՟տնս յտնից ամէն»։

Այս միեւնոյն յիշատակարանը մէջ է բերում եւ Փիրղալէմեան իւր Նոտարքի մէջ, եր. 188, բայց փոփոխութեան ենթարկուած։ Յիշատակարանի շարունակութիւնից այնպէս կարելի է մակաբերել, թէ ճեղինակն տպրում էր Ջէ (=1458) Թուին եւ նա Մուրատի ու Մարգարտի որդին է. մինչդեռ վերջինս արտագրող գրիչն է միայն։

* Թօփճեան. Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ վ-ի. 98.

** Փիրղալէմեան. Նոտարք 77։ Ալիշան Հայապատում 562։